ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 45

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով.

Ավագանին որոշում է.

ՀԱՍՏԱՏԵԼ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 13 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ;

1.ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ« ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ« ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.4 2017ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ

2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ

3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ

4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ

6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ

7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱԶԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Գ.ԳԱԼՍՏՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 46-Ն

## ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ,ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ,ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով.

Ավագանին որոշում է.

Հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱԶԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 48-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ,ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի պահանջով.

Ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնքի համայնքապետարանի աշխատակազմի, համայնքապետարանի ենթակայության հիմնարկ ձեռնարկությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1,2-ի;

Աշխատակիցների թվաքանակը՝ 12

2.Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

հավելված 1

| N | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԻ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀՀ ԴՐԱՄ |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | | 240000 |
| | Հայացողական պաշտոններ | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 176400 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 178800 |
| | Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| 4 | Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | Թափուր | |
| 5 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ/2.3-1 | 1 | 176400 |
| 6 | Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 138000 |
| 7 | Աշխատակազմի արաջատար մասնագետ/3.1-2/ | 1 | 138000 |
| 8 | Աշ խատակազմի առաջին կագի մասնագետ/3.2-1/ | 1 | 136800 |
| 9 | Աշ խատակազմի երկրորդ կագի մասնագետ/3.3-1/ | 1 | 130000 |
| | **Քաղաքացիական աշխատանք իրականացնող** | | |
| 10 | Գրադարանավար | 1 | 103200 |
| 11 | Ֆիզկուլտուրայի ղեկավար | 1 | 103200 |
| | **Տեղ .սպասարկման անձնակազմ** | | |
| 12 | Հավաքարար | 1 | 79367 |
| 13 | Վարորդ | 1 | 84986 |

Հավելված 2

ՆՈՐԱԲԱՑԻ «ՁՆԾԱՂԻԿ» Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 132.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| N | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԻ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ<br>ՀՀ ԴՐԱՄ |
|---|---|---|---|
| 1 | Մանկապարտեզի տնօրեն | 1 | 143000 |
| 2 | Դաաստիարակ | 1 | 133300 |
| 3 | Դաստիարակ | 1 | 133300 |
| 4 | Հաշվապահ | 1 | 82904 |
| 5 | Երաժիշտ | 1 | 77904 |
| 6 | Բուժ.քույր | 1 | 72753 |
| 7. | Տնտեսվար | 1 | 77904 |
| 8 | Դաստիարակի օգնական | 1 | 72753 |
| 9 | Դաստիարակի օգնական | 1 | 77904 |
| 10 | Խոհարար | 1 | 94700 |
| 11 | Բակապան | 1 | 72753 |
| 12. | Պահակ | 1 | 72753 |
| 13 | Հնոցապան | 1 | 70822 |

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱԶԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 47-Ն

## ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-կետի պահանջով.

Ավագանին որոշում է.

1.Նորաբաց համայնքում 2018թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա.մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների , ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ.սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ համար՝ 201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.

-501-ից մինչև 1000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

-1001-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝հիսուն հազար դրամ.

-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ.ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ.

-20և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ:

2/համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգման,ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա.չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.

բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման,վերականգման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ.նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3/Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4.համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5.համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6.համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա.ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսակի համար՝

-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ.
-26-ից մինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասհազար մեկ դրամ.
-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ.
-101-ից 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ.
-201-ից 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ.
-501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դռպքում՝ քառասունհիյգ հազար դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվութիյան համար, յուրաքանչյուր եռամսակի համար.
-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ.
-26-ից մինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տաս  հազար մեկ դրամ.
-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասերեք հազար մեկ դրամ.
-101-ից մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ.
-201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ.
-501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ.

8.իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9.համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին,խաղատներին և բաղնիքների /սաունաներին/ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝օրացույցային տարվա համար.
ա.առևտրի օբյեկտների համար՝հինգ հազար դրամ.

բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

10.համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ.
-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամ.
-51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար մեկ դրամ.
-101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ.

-201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհազար մեկ դրամ.
-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամ.

բ.ոչ հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հազար մեկ դրամ.
-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար հազար մեկ դրամ.
-51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամ.
-101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամ.
-201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամ.

-501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար տասնհինգ հազար մեկ դրամ.

11/ ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալայիբն տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար երկու հազար դրամ.

բ. թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար երեք հազար հինգ հարյուր դրամ.

գ.սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ.այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25տոկոսը՝ երեք հարյուր յոթանասունհինգ դրամ.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու համար սահմանված տուրքի 10-տոկոսի չափով՝ հարյուր հիսուն դրամ.

12/համայնքի տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար տաս հազար դրամ.

13/համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

2.Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերին համայնքի ավագանու որոշմամբ կիրառել 0.5գործակիցը:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1/Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ . 2/ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը,

ընդլայնումն ու բարկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար տաս հազար դրամ.

3/ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ.

4/համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկազնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ քսանհինգ հազար դրամ .

5/համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հազար դրամ.

6/համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով չորս հազար դրամ.

7/համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար  երկու հարյուր դրամ փոխհատուցման վճար.

8/համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական նշմաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում՝

ա. համայնքում  հաշվառված յուրաքանչյուր բնակիչի համար ամսական աղբահանության վճար տաս դրամ.

բ.առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ  յուրաքանչյուր ամսվա համար 1քառ մ.-ի համար  քսան դրամ.

գ. Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ 0 դրամ

ե.կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ յուրաքանչյուր ամսվա համար  1քառ. մ-ի համար երկու դրամ.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ

2. ՍԱԱՏՐՅԱՆ ՍՆՈՒՇ

3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ

4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ

6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ

7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱԶԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 49-Ն

## 2017ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով

Ավագանին որոշում է.

Հաստատել Նորաբացի համայնքապետարանի գույքագրման հանձնաժողովի կողմից ներկայացված համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱԶԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 50-Ն

## ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-կետի պահանջով.

Ավագանին որոշում է.

Վարչական բյուջեի եկամտային մասում կատարել փոփոխություն;

եկամտային մասը հողի հարկի մասով պակասեցնել 292.6հազ.դրամ

Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել փոփոխություն:

11.1.2 պահուստային միջոցներ «536.4» փոխարինել «0»
4891պահուստային միջոցներ պակասեցնել 536.4հազ.դրամ

05.1.1 աղբահանություն «2100» փոխարինել «1800.0» թվով թվով
4213 կոմունալ ծառայություն պակասեցնել 300.0հազ.դրամ
5122վարչական սարքավորումներ ավելացնել 150.0հազ.դրամ

08.1.1հանգստի սպորտի ծառայություն «160.0»փոխարինել 0
4269հատուկ նպատակային նյութեր պակասեցնել 100հազ.դրամ 100.0հազ.դրամ
4819նվիրատ. այլ շահույթ չհետ, կազմ.պակասեցնել 60.0հազ.դրամ

01.6.1ընդհանուր բնույթի հանրային ծառ. «1485.0»փոխարինել «1698.8»թվով

4241 մասնագիտական ծառայություն ավելացնել 213.8հազ.դրամ

10.7.1սոց հատուկ արտոնություն «3950.0»փոխարինել «4440.0»թվով
4729 այլ նպաստ բյուջեից ավելացնել 490.0հազ.դրամ

Ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել փոփոխություն:

01.6.1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություն «3444.3»փոխարինել «0»

5112շենք շինության կառուցում պակասեցնել 3444.3հազ.դրամ

5113շենք շինության կապիտալ վերանորոգում ավելաց. 990.0հազ.դրամ

5133գեոդեզական քարտեզագրման ծախսեր ավելացնել 990.0հազ.դրամ
5122վարչական սարքավորումներ ավելացնել 150.0հազ.դրամ

09.8.1կրթության այլ դասին չպատկանող «4910.0»փոխարինել «6050.0»թվով

5113շենք շինության կապիտալ վերանորոգում ավելացնել 990.0
5122վարչական սարքավորումներ ավելացնել 150.0հազ.դրամ

04.5.1ասֆալտ բետոնե ծածկի վերանորոգում «7600.0» փոխարինել «7774.3» թվով

5122վարչական սարքավորումներ ավելացնել 650.0հազ.դրամ

5113շենք շինության կապիտալ վերանորոգում ավելացնել 475.7հազ.դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱԶԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ**